ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

372
Հ-99

ԼՈՒՍԱԳԱՐԲՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1938 Թ.

37
99
0 120-18

Հ Ր Ա Մ Ա Ն № 8

ԱՊՐԻԼԻ 5-Ի 1938 Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

1.

Հաստատել տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների ստուգողական քննությունների մասին հրահանգը:

2.

Առաջարկել բոլոր ժողկրթբաժինների վարիչներին և դպրոցների դիրեկտորներին — վարիչներին ստուգողական քննությունների հրահանգը մանրամասն կերպով ծանոթացնել ուսուցիչներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԻ ՏԵՂԱԿԱԼ՝
Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

3299-38

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Տարեկան փոխադրական և ավարտական ստուգո ղական քննություններ անց են կացվում Հայկական ԽՍՀ բոլոր դպրոցներում, վորպես աշակերտների գի- տելիքների տարեկան հաշվառման յեզրափակման մի ձեվ:

2. Ստուգողական քննությունները դպրոցներում անց են կացվում աշակերտների փաստական գիտելիքների և նրանց կողմից տարեկան ուսումնական ծրագրի յուրացման աստիճանը հայտնաբերելու նպատակով, մյուս կողմից պարզելու աշակերտների պատրաստվածությունը վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների հաջորդ դասարաններում ու մանկավարժական ուսումնարաններում, տեխնիկումներում և բարձրագույն դպրոցների հաջորդ, բարձր դասարաններում հաջողությամբ սովորելու համար:

50.479
14 JUN 2013

2. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1· Ստուգողական քննություններն անց են կացվում տարբերական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 4—10 դասարաններում:

Պարապմունքները բոլոր դասարաններում վերջանում են մայիսի 20-ին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Դպրոցի առաջին, յերկրորդ և յերրորդ դասարաններում քննություններ չեն անցկացվում: Այդ դասարանների աշակերտները փոխադրվում կամ մնում են նույն դասարանում՝ համաձայն իրենց առաջադիմության տարեկան գնահատականների:

Առաջին և յերկրորդ դասարանների աշակերտներին աշնանային քննություններ չի տրվում:

Յեթե առաջին և յերկրորդ դասարանի աշակերտը տարեվերջին ունի մայրենի լեզվից կամ թվաբանությունից միջակից ցած գնահատական, մնում է նույն դասարանում:

բ) Յերրորդ դասարանի աշակերտին մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարելի յե տալ աշնանային քննություն միայն մեկ հիմնական առարկայից:

Մեկից ավելի միջակից ցած գնահատական ունեցող յերրորդ դասարանի աշակերտը մնում է նույն դասարանում:

2· Զորրորդ դասարանից սկսած քննության չեն յենթարկվում և մնում են նույն դասարանում այն աշակերտները, վորոնք 3-ից ավելի հիմնական առարկաներից միջակից ցած գնահատական ունեն:

3· Այն աշակերտները, վորոնք վատ գնահատական ունեն քննության վոչ յենթակա առարկաներից, դարնանային քննությունների ընթացքում լրացուցիչ քննության են յենթարկվում այդ առարկաներից:

Դպրոցների դիրեկտորները և վարիչները պարտավոր են դասացուցակում անհրաժեշտ ժամեր հատկացնել այդ առարկաների քննություններին:

4· Դպրոցների դիրեկտորներին և վարիչներին իրավունք է վերապահվում աշնանը հետաձգել այն աշակերտների քննությունները, վորոնք տարվա ընթացքում հարգելի պատճառով շատ դասեր են բաց թողել:

5· Առանձին դեպքերում վատառողջ յերեխաները, վորոնք տարվա ընթացքում հիմնական առարկաներից «միջակ» գնահատականից վոչ ցած գնահատական են ունեցել, դպրոցի մանկավարժական խորհրդի վորոշմամբ և դիրեկտորի (վարիչի) հաստատմամբ, կարող են հաջորդ դասարանը փոխադրվել առանց քննության:

Այն դեպքում, յերբ այդպիսի յերեխաները միջակից ցած գնահատական ունեն և հնարավորություն չունեն դարնանը քննվելու, պետք է այդ առարկաներից քննության յենթարկել նրանց աշնանը:

6· Զորրորդ դասարանից սկսած, յեթե աշակերտը ստուգողական քննություններից հետո քննության յենթակա 1—3 առարկայից միջակից ցած գնահատական է ստանում, թույլ է տրվում նրան աշնանը քննություն տալու:

Ստուգողական քննություններից հետո 3-ից ավելի հիմնական առարկաներից միջակից ցած գնահատական ունեցող աշակերտները մնում են նույն դասարանում:

7. Քննությունները կատարվում են հետևյալ առարկաներից հետևյալ ժամկետներում.

4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Թվաբանությունից (գրավոր և բանավոր).
Աշխարհագրությունից (բանավոր).
Ընդամենը 7 քննություն, վորից 3-ը գրավոր.
Մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (17 որ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տարրական դպրոցի 4-րդ դասարանում քննությունները համարվում են ավարտական:

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Թվաբանությունից (գրավոր և բանավոր).
Աշխարհագրությունից (բանավոր).
Ռուսաց դպրոցներում նաև հայոց լեզվից (գրավոր).

Հայկական դպրոցներում 7 քննություն, վորից 3-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ (17 որ).

Ռուսական դպրոցներում 7 քննություն, վորից 3-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 7-ը ներառյալ (19 որ):

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Թվաբանությունից (գրավոր և բանավոր).
Աշխարհագրությունից (բանավոր).
Բուսաբանությունից (բանավոր).
Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (գրավոր և բանավոր).

Հայկական դպրոցներում 8 քննություն, վորից 3-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 7-ը ներառյալ (19 որ):

Վոչ հայկական դպրոցներում 10 քննություն, վորից 4-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 9-ը ներառյալ (21 որ):

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (բանավոր և գրավոր).
Գրականությունից (բանավոր և գրավոր).
Ռուսաց լեզվից (բանավոր և գրավոր).
Հանրահաշվից (գրավոր).
Ցերկրաչափությունից (բանավոր).
Ֆիզիկայից (բանավոր).
Սահմանագրությունից (բանավոր).
Կենդանաբանությունից (բանավոր).
Աշխարհագրությունից (բանավոր).
Ոտար լեզվից (բանավոր).
Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (գրավոր և բանավոր).

Հայկական դպրոցներում 13 քննություն, վորից 4-ը

գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ (27 օր):

Վոչ հայկական դպրոցներում 15 քննություն, վորից 5-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 17-ը ներառյալ (29 օր):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վոչ լրիվ միջն. դպրոցի 7-րդ դասարանի քննությունները համարվում են ավարտական քննություններ:

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր).
Գրականությունից (գրավոր և բանավոր).
Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց գրականությունից (բանավոր).
Հանրահաշվից (գրավոր և բանավոր).
Երկրաչափությունից (բանավոր).
Մարդու անատոմիա-ֆիզիոլոգիայից (բանավոր).
Ոտար լեզվից (բանավոր).
Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (գրավոր և բանավոր).

Հայկական դպրոցներում 11 քննություն, վորից 4-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 15-ը ներառյալ (27 օր):

Վոչ հայկական դպրոցներում 13 քննություն, վորից 5-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 17-ը ներառյալ (29 օր):

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր).
Գրականությունից (գրավոր և բանավոր).

Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց գրականությունից (բանավոր).
Հանրահաշվից (գրավոր).
Երկրաչափությունից (բանավոր).
Բնանկյունաչափությունից (բանավոր).
Եվրոյացիոն ուսմունքից (բանավոր).
Աշխարհագրությունից (բանավոր).
Ֆիզիկայից (բանավոր).
Քիմիայից (բանավոր).
Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (գրավոր և բանավոր).

Հայկական դպրոցներում 13 քննություն, վորից 4-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 16-ը ներառյալ (28 օր):

Վոչ հայկական դպրոցներում 15 քննություն, վորից 5-ը գրավոր. մայիսի 20-ից մինչև հունիսի 19-ը ներառյալ (31 օր):

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մայրենի լեզվից (գրավոր և բանավոր).
Գրականությունից (գրավոր և բանավոր).
Ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր).
Ռուսաց գրականությունից (գրավոր և բանավոր).
Հանրահաշվից (գրավոր և բանավոր).
Երկրաչափությունից (գրավոր և բանավոր).
Բնանկյունաչափությունից (բանավոր).
Ֆիզիկայից (բանավոր).
Քիմիայից (բանավոր).
ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունից (բանավոր).
Ոտար լեզվից (բանավոր).

Վոչ հայկական դպրոցներում նաև հայոց լեզվից (բանավոր և գրավոր) և հայ գրականությունից (բանավոր)։

Հայկական դպրոցներում 17 քննություն, վորից 6-ը գրավոր։

Վոչ հայկական դպրոցներում 20 քննություն, վորից 7-ը գրավոր։ Մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը (մեկ ամիս) բոլոր դպրոցներում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։—ա) 10-րդ դասարաններում մայրենի լեզվից և գրականությունից բանավոր քննությունները կատարվում են միաժամանակ, սակայն գնահատականները տրվում են առանձին-առանձին։

բ) Հայկական ԽՍՀ բոլոր միջնակարգ դպրոցներում 10-րդ դասարանների գրավոր քննությունները կատարվում են Լուսժողկոմատի կողմից սահմանված միասնական որերին։

3. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

8։ Քննությունների ժամանակ դիտելիքների ստուգումը կատարվում է տվյալ առարկայի ծրագրի սահմաններում։

9։ Տվյալ դպրոցի վորևե դասարանի ծրագրի թերակատարման մասին դպրոցի դիրեկտորը պարտավոր է մինչև քննություններն սկսվելը հայտնել ժողկոմբաժնին, տալով այդ մասին բացատրություն։

10-րդ դասարաններում ծրագրի թերակատարման դեպքում աշակերտների ավարտումը կարող է թույլատրել միայն անձամբ լուսժողկոմը։

10։ Քննություններն անց են կացվում ուսմասվարի կազմած և դիրեկտորի կողմից հաստատված հատուկ դասացուցակով, վորը փակցվում է դպրոցում քննություններն սկսելուց 10 որ առաջ։

11։ Դասացուցակը կազմելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով։

ա) Հայկական ԽՍՀ բոլոր դպրոցներում ստուգողական քննություններն սկսվում են մայիսի 20-ից։

բ) Քննության յենթակա այն առարկաները, վորոնք աշակերտից զգալի լարվածություն են պահանջում, պետք է մեջ ընդ մեջ հաջորդեն ավելի հեշտ առարկաներ։

գ) Հանգստի որերին քննություններն անցկացնելն արգելվում է։

դ) Յուրաքանչյուր գրավոր քննության համար հատկացվում է՝ 4-րդ դասարաններում մեկ ժամ, 5—7-րդ դասարաններում—2 ժամից վոչ ավելի, 8—10 դասարաններում—3-ից վոչ ավելի։

յե) 4—7 դասարաններում յուրաքանչյուր առարկայի բանավոր քննություններին հատկացվում է 4 ուսումնական ժամից վոչ ավելի, 8—10 դասարաններում որական 5 ժամից վոչ ավելի։

զ) Յուրաքանչյուր առարկայի քննությունը (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանա մեկ որում, հարկ յեղած դեպքում բանավոր քննություն կատարելիս, կարելի յե դասարանը բաժանել յերկու մասի (օրինակ՝ դասարանի մի մասը քննվում է առավոտյան ժամը 9-ից, մյուս մասը՝ ցերեկվա ժամը 2-ից)։

է) Դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո միայն բանավոր քննությունների ժամանակ։

ը) Բանավոր քննության յենթարկված աշակերտը կարող է մնալ դասարանում կամ հեռանալ դասարանից դասամիջոցին:

Գրավոր քննությունների ժամանակ աշակերտն աշխատանքը կատարելուց և ուսուցչին հանձնելուց հետո պարտավոր է անմիջապես հեռանալ դասարանից:

12. Բանավոր քննությունները բոլոր դասարաններում կատարվում են տոմսերով: Տոմսերի մեջ գրվում են դասընթացի ծրագրի տարբեր բաժիններից 2—3 հարցեր (հարցերը խճճված չպետք է լինեն, այլ աշակերտին հասկանալի և ընթեռնելի գրված): Տոմսերում գրվելիք հարցերը նախորդ կազմում է տվյալ առարկայի դասատուն և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը կամ ուսմասվարը):

13. Յուրաքանչյուր առարկայից տոմսերի քանակը պետք է համապատասխանի տվյալ դասարանի աշակերտների քանակին կամ 3—5 տոմսով ավելի:

Տոմսերում պետք է ընդգրկված լինի տվյալ առարկայի տարեկան ամբողջ ծրագիրը:

14. Աշակերտին յերբ հրավիրում են քննության, տոմսը վերցնում է անձամբ ինքը. յեթե նա դժվարանում է պատասխանել վերցրած տոմսի հարցերին, իրավունք է տրվում վերցնել յերկրորդ տոմսը:

Անհրաժեշտ դեպքում, մասնավորապես, յերբ աշակերտը դժվարանում է պատասխանել վերցրած տոմսի հարցերին, այն ժամանակ ուսուցիչը և ասիստենտը տվյալ աշակերտի փաստացի գիտելիքները հայտնաբերում են լրացուցիչ հարցերով:

Մեկ տոմսը նույն դասարանում յերկրորդ անգամ չի պատգործվում:

15. Յուրաքանչյուր դասարանի համար ուսուցիչը պարտավոր է քննության յենթակա իր առարկայից մինչև ապրիլի 25-ը դասադրքի և ծրագրի հիման վրա կազմել քննության ծրագիր և ներկայացնել դպրոցի դիրեկտորին (վարիչին) ի հաստատություն:

Այս ծրագրերի մեջ չպետք է մտցնել գրավոր և բանավոր քննությունների համար նախատեսված (մաթեմատիկայից և լեզվից) խնդիրները, վարժությունները, թելադրության տեքստերը և քերականական վերլուծության համար նախատեսված տեքստերը:

16. Քննություններից 15 որ առաջ դիրեկտորի (վարիչի) կողմից հաստատված քննությունների ծրագրերը պետք է պարզաբանել աշակերտությանը:

17. Մայրենի լեզվից գրավոր քննության ժամանակ 4, 5, 6, 7, 8, 9 և 10-րդ դասարաններում տրվում է թելադրություն: Գրականությունից 8, 9, 10-րդ դասարաններում տրվում է շարադրություն տարվա ընթացքում անցած ծրագրից, իսկ 7-րդ դասարաններում՝ անցած նյութերի շարահարում:

Շարադրության համար առաջարկվում է յերեք թեմա և աշակերտներին իրավունք է վերապահվում ընտրել դրանցից մեկը:

18. Մաթեմատիկայից գրավոր քննության ժամանակ 4, 5 և 6-րդ դասարաններում տրվում է մեկ խնդիր և յերկու վարժություն թվաբանությունից:

7-8-րդ դասարաններում՝ — մեկ խնդիր և յերկու վարժություն հանրահաշվից. 9-րդ դասարանում — մեկ խնդիր, յերկու վարժություն հանրահաշվից, 10-րդ դասարաններում — մեկ խնդիր, յերկու վարժություն հանրահաշվից և մեկ խնդիր յերկրաչափու-

թյունից յեռանկյունաչափության կիրառումով։

Խնդիրները և վարժությունները տրվում են յերկու վարիանտով, հավասար չափի բարդություններով։

19· Թելադրության տեքստերը, գրականությունից չարադրության թեմաները, մաթեմատիկայից խնդիրները և վարժությունները բոլոր դասարանների համար (բացառությամբ 10-րդ դասարանի) նախապատրաստվում է տվյալ դասարանի, տվյալ առարկայի դասատուի կողմից և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը)։

20· 10-րդ դասարանների գրավոր նյութերն ուղարկվում են Լուսժողկոմատից, փակ ծրարով։ Ժողկրթբաժիններն այդ ծրարները հանձնում են դպրոցների դիրեկտորներին քննությունների յերկու որ առաջ։

Դպրոցների դիրեկտորներն այդ թեմաները հանձնում են դասատուներին միայն քննության որը։

21· Բոլոր գրավոր աշխատանքներն աշակերտները կատարում են դպրոցի դիրեկցիայի կողմից նախորոք պատրաստված և կնքված թերթիկների վրա։

22· Քննությունները բոլոր դասարաններում (բացի 10-րդ դասարանից) կատարում է տվյալ առարկայի դասատուն. քննությունների ժամանակ անպայման ներկա յե լինում նույն կամ հարակից առարկայի մի դասատու ևս (ասիստենտ) դիրեկտորի նշանակումով։

4. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

23· Միջնակարգ դպրոցների ավարտական՝ 10-րդ դասարանների քննությունները կատարվում են հանձնաժողովի միջոցով, հետևյալ կազմով՝ դպրոցի դիրեկտորը, վորը հանդիսանում է տվյալ հանձնաժողովի նախագահը, տվյալ առարկայի դասատուն, դիրեկտորի կողմից նշանակված ասիստենտը և ժողկրթբաժնի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ· — 1· Վորպես ժողկրթբաժնի ներկայացուցիչներ հրավիրվում են Համալսարանի պրոֆեսորները և դոցենտները, մանկավարժական և ուսուցչական ինստիտուտների, մանկավարժական ուսումնարանների և այլ միջնակարգ դպրոցների դասատուները, դպրոցական հրահանգիչները։

2· Դպրոցի դիրեկտորը պարտավոր է մինչև քննությունների սկսվելը հանձնաժողովի անդամներին ծանոթացնել տվյալ հրահանգի հետ։

24· Գիտելիքների գնահատման քննարկությունը մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները։ Վերջնական յեզրակացության իրավունքը պատկանում է դպրոցի դիրեկտորին։

5. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՅԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

25· Աշակերտները փոխադրվում են հաջորդ դասարան կամ դպրոցն ավարտում են այն ժամանակ, յերբ ուսումնական դասընթացի բոլոր առարկաներից միջակից ցածր գնահատական չունեն։

Պայմանական փոխադրումներ չեն թույլատրվում։

Ծանոթություն· — Նկարչությունից, գծագրությունից, յերգից և ֆիզկուլտուրայից միջակից ցածր գնահատականները խոչընդոտ չեն հանդիսանում աշակերտի հաջորդ դասարան փոխադրման համար։

26· Աշնանային քննությունների ժամանակ, յերբ աշակերտն ստանում է միջակից ցած գնահատական նույնիսկ մեկ առարկայից, մնում է նույն դասարանում:

27· Տարեկան ընդհանուր գնահատականները քննության վոչ յենթակա առարկաներից, վորոշվում են ուսումնական չորս քառորդների գնահատականների հիման վրա:

Տարեկան ընդհանուր գնահատականները, քննության յենթակա առարկաներից, վորոշվում են տարեկան և քննություններին ստացած գնահատականների հիման վրա:

Տարեկան ընդհանուր գնահատականների հիման վրա մանկավարժական խորհուրդը վորոշում է աշակերտի մի դասարանից մյուս դասարան փոխադրվելու կամ դպրոցն ավարտելու խնդիրը, վորը հաստատվում է դպրոցի դիրեկտորի (վարիչի) կողմից:

Ծանոթություն·— Լեզուներից և գրականությունից տարեկան գնահատականներում պետք է նշանակել գրավորից և բանավորից առանձին գնահատականներ: Մնացած բոլոր առարկաներից տրվում է միայն մի գնահատական:

28· Ուսումնական տարին ավարտելուց հետո աշակերտին տրվում է՝

ա) Ատեստատ (Լուսժողկոմատի սահմանած ձևով) միջնակարգ դպրոցն ավարտողներին:

բ) Վկայական՝ տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողներին.

գ) Փոխադրման վկայականներ՝ դասարանից-դասարան փոխադրվող բոլոր աշակերտներին.

դ) Գովասանագրեր տրվում են այն աշակերտներին, վորոնք ունեն գերազանց վարք, հիմնական առարկաներից՝ գերազանց գնահատական և վոչ հիմնական առարկաներից (գծագրություն, նկարչություն, յերգ և ֆիզկուլտուրա) — լավից վոչ պակաս գնահատական:

յե) Աշնանային քննությունները կատարվում են ոգոստոսի 22-ից 28-ի ժամանակաշրջանում:

29· Տեղափոխման դեպքում աշնան քննություններն աշակերտները տալիս են այն դպրոցում, ուր տեղավորվում են:

30· Աշնանային քննությունների համար գրավոր աշխատանքների տեքստերը, շարադրության թեմաները, թելադրության տեքստերը, խնդիրներն ու վարժությունները կազմում են համապատասխան առարկաների դասատուները և հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը):

Բանավոր քննությունների ժամանակ ոգտագործվում են յուրաքանչյուր առարկայի զարնանային քննությունների ծրագրերը:

31· Դպրոցների դիրեկտորները (վարիչները) պարտավորվում են աշնանային քննություն ունեցող աշակերտներին ցույց տալ կազմակերպված ոգնություն (տրամադրել դպրոցի շենքը, կազմակերպել խմբակային պարապմունքներ) և հնարավորություն տալ նրանց փոխադրվելու հետևյալ դասարան:

Աշակերտին աշնանային քննություններին պատրաստելու համար կոնկրետ միջոցառումներ նշվում են դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակման նիստին, զարնանային քննություններից անմիջապես հետո:

32· Մանկավարժական խորհրդի վորոշումը յուրաքանչյուր աշակերտի մասին, դիրեկտորի կողմից հայտնվում է ծնողներին:

33· Տվյալ հրահանգն ամբողջապես վերաբերվում է նաև Հայկական ԽՍՀ-ում գտնվող բոլոր վոչ հայկական դպրոցներին:

6. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

34· Աշակերտների քննական դրավոր աշխատանքները (թելադրությունները, շարադրությունները, խնդիրները և վարժությունները) պահվում են դպրոցում:

35· Յուրաքանչյուր դասատու իր առարկայից քննությունը վերջացնելուց հետո, հենց նույն որը նշանակելով աշակերտների գնահատականները, լրացնում է քննության արձանագրությունը և իր ու ասիստենտի ստորագրությամբ հանձնում դիրեկտորին:

36· Ստուգողական քննությունների արդյունքները քննարկվում են և ամփոփվում դպրոցի մանկավարժական խորհրդի յեզրափակման նիստում:

37· Դպրոցի դիրեկտորը քննությունների արդյունքների ամփոփումները ներկայացնում է ժողկրթբաժին—

4, 5 և 6-րդ դասարանների հունիսի 13-ին.

7, 8, 9 և 10-րդ դասարանների՝ հունիսի 22-ին.

Ժողկրթբաժինները քննությունների արդյունքների ամփոփումները ներկայացնում են Լուսժողկոմատին—

4, 5 և 6-րդ դասարանների՝ հունիսի 17-ին.

7, 8, 9 և 10-րդ դասարանների՝ հունիսի 26-ին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1· Ժողկրթբաժինները քննությունների արդյունքների ամփոփումները ներկայացնում են Լուսժողկոմատի Տարրական և Միջնակարգ դպրոցների վարչություններին առանձին-առանձին:

2· Կցվում են հաշվեմատության ձևերը.

ա) Քննությունների արդյունքների ամփոփումների միասնական ձևը.

բ) Քննությունների արձանագրության ձևը:

Հայկ. ԽՍՀ Լուսժողկոմատի Միջնակարգ դպրոցների վարչության պետ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայկ. ԽՍՀ Լուսժողկոմատի Տարրական դպրոցների վարչության պետ՝ Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ա Մ Փ Ո

. . . . . շրջանի . . . . դպրոցի քննու-

(Դպրոցի դիրեկտորն ուղար-

Դասարան-ներ	Աշակերտների միջին թվաքանակը (ընդամենը)	ՆՐԱՆՑԻՑ			
		Քննությունների ենթարկված աշակերտների թիվը	Փոխադրված են հաջող դասարան	Քննություն. չեկաց մնացել են աշխատանքը	Թողնված են 2-րդ դասարան քննվելու
1	2	3	4	5	6
1.					
2.					
3.					
4.					
Ընդամենը					
5.					
6.					
7.					
Ընդամենը					
8.					
9.					
10.					
Ընդամենը					
Ընդամենը դպրոցում					

Դ Ի Ր Ե Կ Տ Ո Ր . . . . . .

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉ . . . . . .

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ— 1) 1-3-րդ դասարանների տեղեկություն-

2) Ամփոփումները ՀԽՍՀ Լուսժողկոմատ

Զև № 1

Փ Ո Ի Մ

թյունների արդյունքների մասին

կում և Ժողկրթբաժնին)

Քննությունները կամ կիսամյակները	ՆՐԱՆՑԻՑ			Ընդամենը կամ կիսամյակի ընդամենը	Ընդամենը կամ կիսամյակի միջին թվաքանակը	Ընդամենը թողնվել, կամ դասընթացքը չավարտած
	Փոխադրվել են դասընթացքի	Մնացել են	Թողնվել են դասընթացքի սկզբում			
7	8	9	10	11	12	13

Ներբարվում են՝ 2, 11, 12 գրաֆաներով։

են ուղարկվում նույն ձևով։

Ազգային գրադարան
NL0228817

ՁԼ № 2

Հաստատում եմ՝

Դպ. դիրեկտոր . . . . . .

« » . . . . . 1938 թ.

Ա. Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

..... շրջ. ..... գպրոցի

..... դասարանի ..... քննության .....

(առարկա)

Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը.....

Ասիստենտի ազգանունը, անունը, հայրանունը.....

(10-րդ դասարանների համար գրվում է նաև հանձնաժողովի անդամների ազգանունները)

№№	Աշակերտի ազգանունը, անունը	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Դասատու .....

Ասիստենտ .....

(X դասարանների համար նաև հանձնաժողովի անդամների ստորագրությունը).

« » ———— 1938 թ.

Պատ. խմբագիր՝ Ա. Մալխասյան
Սրբագրիչ՝ Հ. Մայիլյան
Պատվեր № 280
Գլավլիտ № 6586
Տիրաժ 5000

«Խոր. Հայաստան»-ի հրատ. տպարան

50. 449

213

ՉՐԻ